25 APR 2013

MAR 2010

«Հաստատում եմ»
Կովի. Կարմրաղբոշ Բանակի
Շտաբի պետ Ալափուզա
«11» փետրվարի 1934թ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՇԻՉ ՈՒԺԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զինապարտների և քաշիչ ուժի հաշվառման նպատակն է՝ տեղեկություններ տալ զինվորական վարակավորում ունեցող քաղաքացիների քանակի մասին՝ ըստ զինվորական մասնագիտությունների, կուսակցության և սոցիալական դրության, և ձիերի քանակի մասին՝ ըստ տեսակների և ձիերի ձիասայլերի մասին՝ ըստ ապարների: Այդ տվյալներն անհրաժեշտ են թե խաղաղ և թե պատերազմի ժամանակ ԲԳԿ Բանակի համալրման վերաբերյալ նկատառումներ կազմելու համար:

2. Զինապարտների հաշվառումը ԽՍՀՄ տերիտորիայի վրա կենսագործվում է տեղական ռազմական վարչության որգանների, շրջգործկոմների, գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների խորհնտեսությունների և գործարանների ու ֆաբրիկների կողմից:

3. Զինապարտների հաշվառումն այն է՝ վոր հաշվառման յենթակա քաղաքացիները ցուցակագրվում են հաշվառու մարմիններում և զինվորական տոմսեր են ստանում:

4. Հաշվառու մարմինների ընդհանուր ղեկավարությունը, վերահսկողությունն ու հրահանգումն իրագործվում են շրջ. ռազմական կոմիսարիատների կողմից:

5. Զինապարտների հաշվառումը բաժանվում է հետևյալ տեսակների.—

ա) նախապզորակոչային,

ՀՍՍՀ—ՍՍՌ
Ա. Մեսնիկովա
Ս. ՍՏԱՍԼԻՎՍԿԻ ԱՆՎԱՆ

547
38

վում են պարտադիր զինվորական ծառայությունից. այդպիսի ֆիզիկական պակասություն են համարվում՝

ա) ձեռքի և վոտքի բացակայությունը,

բ) ձեռքի դաստակի կամ վոտքի թաթի բացակայությունը,

գ) աչքի բացակայությունը,

դ) վորևվե ձեռքի յերեք կամ ավելի մատների բացակայությունը,

ե) յերկու ձեռքերի ընդամենը 4 մատների բացակայությունը,

զ) աջ ձեռքի ցուցամատի և բութ մատի բացակայությունը:

18. Նախակոչյան հաշվառումից հանվում են՝

ա) ԲԳԿԲ կամավոր ծառայության ընդունվելիս,

բ) զորակոչի հետեվանքով կադրային և յերկրային զորամասեր նշանակվելիս, թիկունքային աշխարհազորի մեջ նշանակվելիս և կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից ազատվելիս.

գ) արտասահման մեկնելու ժամանակ:

3. ԶՈՐԱԿՈՉԻ ՇՐՋԱՆՆԵՐԻՆ ԿՑԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

19. Գյուղխորհուրդը զորակոչի շրջաններին կցագրելու հրամանն ստանալուց հետո, այդպիսին փակցնում է աչքի ընկնող տեղերում, և միջոցներ է ձեռք առնում հրամանի մասին հայտարարելու յուրաքանչյուր գյուղի բնակչությանը գյուղական ժողովներում և բոլոր տների առանձին-առանձին շրջագայության միջոցով:

20. Անհրաժեշտ քանակությամբ զորակոչային քարտերը գյուղխորհուրդն ստանում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնից:

21. Այն քաղաքացիների զորակոչային քարտերը, վորոնց կցագրումը կատարվում է մշտապես ապրելու բնակավայրում, գյուղխորհուրդը լրացնում է ծխամատյաններում կամ ընտանեական ցուցակներում յեղած

տեղեկությունների և նախակոչիկների ձեռքին ունեցած (կուսակցության և կրթության մասին) փաստաթղթերի հիման վրա:

22. Այն քաղաքացիները, վորոնք կցագրման են ներկայանում գյուղխորհուրդ վոչ իրենց մշտապես ապրելու բնակավայրում, պետք է ունենան իրենց հետ հետևյալ փաստաթղթերը.

ա) տարիքի մասին,

բ) կրթության մասին,

գ) կուսակցականության մասին,

դ) սոցիալական և ընտանեական դրության մասին,

ե) պրոֆմիության անդամներն իրենց անդամատոմսերը:

Ծանոթություն.—1. Դրանից առաջ ԲԳԿ Բանակում ծառայածները ներկայացնում են զորամասի տեղեկանքը:

2. Կրոնական համոզմունքներով զին. ծառայությունից ազատվածները ներկայացնում են դատական մարմինների վորոշման պատճենը:

23. Կցագրման յենթակա քաղաքացիների կցագրման համար, ներկայանալիս, գյուղխորհուրդը ստուգում է նախակոչիկի կողմից ներկայացրած փաստաթղթերը և վերջինների ու ծխամատյանների հիման վրա կազմում է զորակոչային քարտը:

24. Զորակոչի շրջաններին կցագրելու աշխատանքները վերջացնելուց հետո, գյուղխորհուրդն ուղարկում է շրջգործկոմի Զին. Հաշվառման մարմնին զորակոչային քարտերը և կցագրման չներկայացածների ցուցակը:

25. Զորակոչային քարտերն ուղարկելու մոմենտից անմիջապես հետո, գյուղխորհուրդը պարտավոր է հայտնելու հաշվառու մարմնին նախակոչիկի ընտանեական-գույքային, կուսակցական և սոցիալական դրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին և զորակոչիկին վերաբերող այլ տեղեկություններ:

26. Գյուղխորհուրդներից ստացած զորակոչային քարտերի հիման վրա Զին. Հաշվառու մարմինը կազ-

մում է զինվորական տոմսերը, բժշկական քարտերը և անվանացուցակները:

Զորակոչային քարտերն իր մոտ թողնելով, Զին. Հաշվառման մարմինն զինվորական տոմսերն ու բժշկական քարտերն ուղարկում է համապատասխան գյուղխորհուրդներին նախակոչիկներին հանձնելու համար:

27. Զին. տոմսերը հանձնելիս գյուղխորհուրդը բացատրում է նախակոչային հաշվառման կանոնները և նրանց պարտավորեցնում է ճիշտ սահմանված ժամկետներին ներկայանալու բժշկական հիմնարկները նախնական բժշկական քննության համար:

28. Գյուղխորհուրդները պատասխանատու են նախակոչիկների՝ սահմանված ժամկետներին նախնական բժշկական քննության լիովին ներկայանալու համար. այս նպատակով նրանք պարբերաբար ստուգում են նախակոչիկների բժշկական քարտերում բժշկական հիմնարկների կողմից արված նշումները:

29. Բժշկական–պրոֆիլակտիկ միջոցներ կիրառելու համար գյուղխորհուրդը՝

ա) հատուկ բժշկական հիմնարկների է կցում այն նախակոչիկներին, վորոնք նախնական բժշկական քննության պրոցեսում հիվանդ են հայտնաբերված և բուժման կարիք են զգում.

բ) հետևում է, վորպեսզի բոլոր նախակոչիկները յուրաքանչյուր ամիս ներկայանան բուժական հիմնարկը՝ հերթական բժշկական քննության.

գ) բացատրում է նախակոչիկներին, վոր նրանք խնամքով պահեն բժշկական քարտերը, նկատի ունենալով, վոր այդ քարտերն իրեն անհրաժեշտ փաստաթուղթ է ծառայելու զորակոչային հանձնաժողովի համար՝ նախակոչիկի պիտանելության հարցը վորոշելիս:

դ(սերտ կապ է հաստատում գյուղխորհուրդի տերիտորիայում գտնվող այն բժշկական հիմնարկների հետ, վորոնք կցված են նախակոչիկների հատուկ բուժման համար:

30. Կցադրման ժամանակ հայտնաբերված անդրա-

դեպ և կիսադրադեպ նախակոչիկներին կցում է լիկվայաններին և հետևում է նրանց կողմից պարապմունքները կանոնավոր հաճախելուն, այն պայմանով, վոր մինչև բժշկական քննությունն սկսելը վոչ մի անդրադեպ կամ կիսադրադեպ նախակոչիկ չմնա:

31. Այն նախակոչիկները, վորոնք ստիպված են փոխել իրենց զորակոչային շրջանը արդեն կցադրվելուց հետո, իրենց գյուղխորհուրդներին դիմումներ են ներկայացնում, կցելով զինվորական տոմսերը և զորակոչային շրջանը փոխելու անհրաժեշտությունը հաստատող փաստաթղթերը. գյուղխորհուրդներն այդ դիմումները կցված փաստաթղթերի հետ միասին ուղարկում են շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին և վերջինից զինվորական տոմսը կատարված նշումներով ստանալուց հետո հանձնում են նախակոչիկներին:

32. Գյուղխորհուրդները նախակոչիկներից պատռված ու հնացած զինատոմսերը ստանալուց հետո, ուղարկում են այդպիսիները շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին, վորը դրանց փոխարեն կազմում է պատճենները և ուղարկում է գյուղխորհրդին նախակոչիկներին հանձնելու համար:

33. Նախակոչիկներից՝ զին. տոմսը կորցնելու մասին դիմում ստանալու դեպքում, գյուղխորհուրդն ուղարկում է այդ դիմումը հաշվառման մարմնին, վորը զորակոչային քարտի հիման վրա կազմում է զորակոչային տոմսի պատճեն և ուղարկում է գյուղխորհուրդին՝ նախակոչիկին հանձնելու համար:

34. Գյուղխորհուրդները պետք է անդուլ հետևեն, վորպեսզի նախակոչիկները ճշտապահորեն հաճախեն վարժական կայաններում տեղի ունեցող նախակոչային պարապմունքները:

35. Գյուղխորհուրդները պարտավոր են նախակոչիկների կողմից նրանց դիմելու բոլոր դեպքերում տեղեկանքներ տալ զորակոչային հանձնաժողովներին ներկայացնելու համար՝

ա) ընտանեական–դուքային դրության մասին, մատնանշելով նախակոչիկի ընտանիքի ամեն մի անդամի ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը և նրանց աշխատունակությունը:

բ) սոցիալական դրության մասին,

գ) գյուղատնտեսական հարկի չափի մասին,

դ) ընտրական իրավունքի մասին:

36. Զորակոչի տարվա հունվար ամսին գյուղխորհրդին կից կազմակերպվում է զորակոչին աջակցող հանձնաժողով՝ գյուղխորհրդի, կոմբջիջի, ԼԿՅԵՄ–ի բջիջի և կոլտնտեսության վարչության ներկայացուցիչներից բաղկացած, վորն իր աշխատանքի ասպարիզում ղեկավարվում է շրջզորածկոմի ցուցումներով:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՌՈՒՄ

37. Ընդհանուր հաշվառման յենթակա յեն ԽՍՀ Միության տերիտորիայում բնակվող արական սեռի այն քաղաքացիները, վորոնք իրենց առողջության վիճակով պիտանի կամ սահմանափակ պիտանի յեն զին. ծառայության համար, յեթե նրանց զորակոչի տարիքում չի տրված մոբիլիզացիայի դեպքում և պատերազմի ժամանակ:

38. Ընդհանուր հաշվառման յենթակա յեն նաև այն կանայք, վորոնք իրենց առողջության վիճակով պիտանի յեն ԲԳԿ բանակում ծառայելու համար, ԲԳԿԲ զորամասերի կամավոր ծառայությունից արձակվածները, շարքային կամ կրտսեր հրամկազմը և քաղաքացիական գծով այնպիսի մասնագիտություններ ձեռք բերողները, վորոնք թույլ են տալիս ոգտագործել նրանց պատերազմի ժամանակ ԲԳԿ բանակում (Պ.Ա.Բ. ռազմականացված դասընթացքները, բժշկական քույրերի դասընթացքներն ավարտածները):

39. Ընդհանուր հաշվառման յենթակա տղամարդիկ և կանայք հաշվառման են յենթարկվում հետևյալ հատկանիշերով՝

ա) ըստ հաշվառման խմբակների, նկատի առնելով նրանց ծառայությունը. ԲԳԿԲ այս կամ այն մասում (ԲԳԿԲ, ԲԳԿ նավատորմ, ծովափնյա պաշտպանություն, ՄՊԲՎ).

բ) պատերազմի ժամանակվա բանակի համալրման կարգով—կցագրվածները և չկցագրվածները.

գ) ըստ ստացված ռազմական պատրաստության հատկանիշի—շարքային կամ կրտսեր հրամկազմ և զին. հաշվառման մասնագիտություններ:

40. Ընդհանուր հաշվառումից հանվում են հետևյալ դեպքերում.

ա) արտասահման գնալու դեպքում,

բ) թիկունքային աշխարհաղորի մեջ մտցնելու դեպքում,

գ) վարչական կարգով աքսորվելու և արտաքսվելու դեպքերում,

դ) վորպես կամավոր կամ մոբիլիզացիայի կարգով ԲԳԿԲ ընդունվելու դեպքում.

ե) ՄՊԲՎ մարմիններում ծառայության ընդունվելու դեպքում, այդ մարմիններից հաղորդագրություն ստանալուց հետո.

զ) հատուկ և հատուկ յերկաթուղային ու ջրային հաշվառման ընդունվելու դեպքում (բրոնիայի յենթարկվածները, յերկաթուղային ու ջրային հաշվառման ընդունվածները).

ը) միջին, ավագ և բարձր պետ. կազմի հաշվառման մեջ փոխադրվելու դեպքում:

թ) մշտապես ապրելու բնակավայրը փոխելու դեպքում յերկու ամսից ավելի ժամանակով, յեթե նոր ընտրված բնակավայրը գտնվում է զին. հաշվառման մի այլ մարմնի շրջանում:

41. Ընդհանուր հաշվառումից ինչպես տղամարդիկ, նույնպես և կանայք հանվում են հետևյալ դեպքերում՝

ա) ոտարերկրյա հպատակություն ընդունելու դեպքում,

բ) զին. ծառայության համար ըստ իրենց առողջության վիճակի վոչ պիտանի լինելու դեպքում.

գ) հաշվառման մեջ գտնվելու սահմանված տարիքը լրանալու դեպքում.

դ) մահվան դեպքում:

42. Հաշվառման մեջ գտնվող բոլոր զինապարտների համար, վորպես զին. հաշվառման փաստաթուղթ, հանդիսանում է նրանց զինվորական տոմսը:

43. ԲԳԿ բանակի կադրերից և տերիտորիալ յերկրային զորամասերի փոփոխական կազմից արձակված զին. ծառայողները և զինապարտները կամ նոր բնակության վայրը յեկողները՝ հաշվառման ընդունվելու համար դիմում են շրջգործկոմի Զին. Հաշվառման մարմնին անմիջականորեն կամ գյուղխորհրդի միջոցով, նայած իրենց անձնական հարմարությունների:

44. Գյուղխորհուրդները բոլոր զինապարտների համար կազմում են հետևյալ անվանացուցակները՝

ա) այն զինապարտների, վորոնք զորամասերին կցագրված չեն և գտնվում են ընդհանուր հաշվառման մեջ.

բ) յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ գտնվող զինապարտների.

գ) հատուկ հաշվառման մեջ գտնվող զինապարտների (բրոնիայի յենթարկվածները).

դ) յերկաթուղային ու ջրային հատուկ հաշվառման մեջ գտնվող զինապարտների.

ե) ԲԳ Միլիցիային կցագրված զինապարտների:

Այդ ցուցակները կազմվում են այս հրահանգին կցված № 1 հավելվածի ձևով: Բոլոր ցուցակների առաջին սյունյակում նշանակվում են հաշվառման հետագա հետ ընդունվածների հերթական համարները, ըստ վորում առանձին անձանց հաշվառումից հանելու դեպքում համարները չեն ուղղվում:

45. Զորամասերին կցագրված զինապարտների ցուցակները, գյուղխորհուրդները դեռ խաղաղ ժամանակ ստանում են շրջգործկոմից և պարբերաբար ստուգում

համեմատում են զինապարտների առկա թվի հետ: Ցուցակում յեղած այս կամ այն՝ կցագրվածի հեռանալու դեպքում, ցուցակում նշանակվում է, թե ուր է գնացել կցագրվածը և վորքան ժամանակով: Ցուցակը կազմվում է № 5 հավելվածի ձևով:

46. Զինվորական տոմսը կորցնելու դեպքում, գյուղխորհուրդները ուղարկում են զինապարտի դիմումը շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին և պատասխան ստանալուց հետո հայտնում են զինապարտին:

47. Զինապարտի հաշվառման համար գյուղխորհուրդը ներկայացնելուց հետո գյուղխորհուրդը՝

ա) զինապարտից վերցնում է նրա ներկայացրած զինվորական տոմսը և նրա մեջ յեղած նշումների համաձայն սահմանում է հաշվառման հատկանիշը.

բ) ցուցակագրում է համապատասխան ցուցակի մեջ.

գ) ուղարկում է զինվորական տոմսը շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին զինապարտի հաշվառումը վերջինիս կողմից ձեվակերպելու համար:

դ) հաշվառու մարմնից զին. տոմսը հաշվառման ընդունելու վերաբերյալ կատարած նշումներով ստանալուց հետո, կանչում է զինապարտին, նրա ձեռքն է հանձնում զին. տոմսը և ցուցակի 8-րդ սյունյակում նշում է անում հաշվառման ընդունելու ժամանակի մասին:

48. Հաշվառումից հանվելու համար, զինապարտները նույնպես ներկայացնում են գյուղխորհուրդ, վորը նել պայացրած զին. տոմսի մեջ նշում է անում հաշվառումից հանելու մասին, ցուցակի 9-րդ սյունյակում նշանակում է հաշվառումից հանելու ժամանակը և տոմսը վերադարձնում է զինապարտին:

49. Բոլոր այն զինապարտների մասին, վորոնց վերաբերմամբ գյուղխորհուրդի կողմից նշումներ են արված հաշվառումից հանելու մասին գյուղխորհուրդը 10 որը մեկ անգամ հայտնում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին, զինապարտների հաշվառումից հանելը ձեվակերպելու համար:

50. Գյուղխորհուրդները պետք է խստորեն հետևվեն զինապարտների ցուցակների վիճակին և ձգտեն, որ այդ ցուցակները մաքսիմալ չափով ոչալ լինեն։

51. Տարեկան յերեք անգամ, հունվարի 1-ին, ապրիլի 1-ին և սեպտեմբերի 1-ին գյուղխորհուրդների նախագահները անձամբ ներկայանում են շրջգործկոմի զին. հաշվառման մարմինը բերելով իրենց մոտ յեղած զինապարտների անվանացուցակները, և ստուգում են ցուցակները զինապարտների քարտատեսակների տվյալների հետ։

52. Գյուղխորհուրդները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն սեզոնայինների կողմից հաշվառման կանոնները պահպանելու.

ա) բոլոր այն զինապարտներին, որոնք սեզոնային աշխատանքների յեն գնում ուրիշ շրջանի սահմանները, գյուղից 100 կիլոմետրից ավելի հեռու, պետք է հանել հաշվառումից, հայտնել այդ մասին շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին և համապատասխան նշում կատարել ցուցակի մեջ։

53. Այն զինապարտների վերաբերմամբ, որոնք ուրիշ զին. հաշվառման մարմնի շրջանից յեկել են սեզոնային աշխատանքի իրենց գյուղից 100 կիլոմետրից ավելի հեռավորությամբ, գյուղխորհուրդը կատարում է այս հրահանգի 47-րդ հոդվածում մատնանշված աշխատանքը։

54. Գյուղխորհուրդները հաշվառման չեն յենթարկում այն զինապարտներին, որոնք թեև ապրում են իրենց տերիտորիայում, բայց աշխատում են այնպիսի ձեռնարկություններում, որոնք իրենց զին. հաշվառման մարմիններն ունեն։

55. Թիկունքայինները և «կրոնականները» (կրոնական համոզմունքներով զին. ծառայությունից ազատվածները) հաշվառման են յենթարկվում առանձին, ուստի այն ամենը, ինչ ասվում է զինապարտների հաշվառման մասին, նրանց չի վերաբերում։

56. Գյուղխորհուրդները պարտավոր են կատարել

զինապարտների վողջ կոնտինգենտի սոցիալական-դասակարգային զտում, վորպեսզի վոչ մի հնարավորություն չտան սոցիալապես անհարազատ տարրերին խցկվելու ԲԳԿԲ շարքերը։

Սոցիալապես անհարազատ տարրերին հայտնաբերելու պլանային աշխատանքն սկսվում է զորակոչային շրջաններին կցագրելու մոմենտից և շարունակվում է մինչև ԲԳԿԲ շարքերն ուղարկելու մոմենտը, ինչպես խաղաղ նույնպես և պատերազմի ժամանակ։

57. Գյուղխորհուրդները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները պահեստային զինապարտների անդրադիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու համար, լիկեյաններում նրանց ընդգրկելու միջոցով, հետևելով նրանց կողմից պարապմունքները կանոնավոր և լրիվ հաճախմանը։ Պարբերաբար այդ աշխատանքի ընթացքի ստուգումներ է անկացնում։

5. ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԱՌՈՒՄ

58. Հատուկ հաշվառման են ընդունվում այն զինապարտները, որոնք անհրաժեշտ են պատերազմի ժամանակ քաղաքացիական հիմնարկների և արդյունաբերական ձեռնարկությունների նորմալ և անընդհատ աշխատանքն ապահովելու համար և կցված են դրանց։

59. Հատուկ հաշվառման մեջ գտնվող զինապարտների վերաբերյալ տեղեկությունները գյուղխորհուրդն ստանում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնից, որոնց հիման վրա և առանձին ցուցակ է կազմվում։

60. Այն բոլոր փոփոխությունների մասին, որոնք տեղի յեն ունենում հիշյալ ցուցակում, գյուղխորհուրդն անմիջապես հայտնում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին, ըստ որում ընդհանուր հաշվառման մեջ գտնվող զինապարտներին հանում է այդ ցուցակից և մտցնում է հատուկ հաշվառման ցուցակի մեջ, և ընդհակառակը, զինապարտների՝ ձեռնարկություններից ու հիմնարկներից արձակվելուց հետո, իսկ դրա կապակ-

ցությամբ նրանց բրոնիայի անհրաժեշտությունը վերանալու հետևանքով, հատուկ հաշվառման ցուցակից, նրանց փոխանցում է ընդհանուր ցուցակի մեջ:

6. ԱՌԱՆՁՆԱԿԻ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

61. Յերկաթուղային ու ջրային տրանսպորտում աշխատող այն զինապարտ բանվորներն ու ծառայողները, վորոնք մոբիլիզացիայի դեպքում և պատերազմի ժամանակ տարկետում ստանալու իրավունք ունեն, բանուժը բրոնիայի յենթարկող կենտրոնական հանձնաժողովի կողմից սահմանված կանոնների հիման վրա, մտցվում են յերկաթուղային ու ջրային հատուկ հաշվառման մեջ:

62. Այն հաշվառումն անմիջականորեն կատարվում է յերկաթուղային ու ջրային տրանսպորտի մարմինների կողմից: Գյուղխորհուրդներում այդ զինապարտների համար առանձին ցուցակ է պահվում, վոր կազմվում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնից ստացված տվյալների հիման վրա:

63. Վերոհիշյալ ցուցակում հետագա տեղի ունեցող բոլոր փոփոխությունների մասին գյուղխորհուրդն անմիջապես հայտնում է շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին, ըստ վորում ընդհանուր հաշվառման մեջ գտնվող զինապարտներին հանում է ցուցակից և մտցնում յերկաթուղային հատուկ հաշվառման ցուցակի մեջ և ընդհակառակը, յերկաթուղային ու ջրային տրանսպորտից արձակվելուց հետո հանում է նրանց հատուկ հաշվառման ցուցակից և մտցնում է ընդհանուր հաշվառման ցուցակը:

7. ՄԻԶԻՆ, ԱՎԱԴ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

6. Միջին, ավադ և բարձր խմբակների պահեստի պետկազմի համար գյուղխորհուրդը ցուցակ է կազմում № 2 հավելվածի ձևով:

65. Այդ սկզբնական ցուցակը լրացվում է շրջգործկոմի հաշվառման մարմնի տվյալների համաձայն:

66. Ցուցակում տեղի ունեցող բոլոր փոփոխությունների մասին գյուղխորհուրդը հաղորդագրություն է ուղարկում շրջգործկոմի զին. հաշվառման մարմնին:

8. ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆՆԵՐԻ ՅԵՎ «ԿՐՈՆԱԿԱՆՆԵՐԻ» ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

67. Թիկունքային աշխարհազորի մեջ գտնվողներ (այդ վերաբերում է միայն տղամարդկանց) են համարվում՝

ա) հերթական զորակոչի ժամանակ զորակոչային հանձնաժողովի կողմից թիկունքային աշխարհազորի մեջ մտցվածները.

բ) ԲԳԿ բանակից արձակված այն անձնավորությունները, վորոնք պարտադիր զին. ծառայության որենքի 28 և 279 հոդվ. կարգով յենթակա յեն թիկունքային աշխարհազորի մեջ մտցվելու.

գ) այն զինվորականներն ու զինապարտները, վորոնք հաշվառման մեջ գտնվելու ժամանակ թիկունքային աշխարհազորի մեջ են մտցվել՝ ընտրական իրավունքից զրկվելու, վարչական կարգով աքսորվելու, դատական կարգով իրավունքների սահմանափակման, ապարատի զտման հանձնաժողովների կողմից քաղաքական ծառայությունից առաջին կարգի զտման հետևանքով:

68. Թիկունքային աշխարհազորի հաշվառման մեջ գտնվելու շրջանը վերջանում է այն թվականի դեկտեմբերի 31-ին, յերբ լրանում է այդ քաղաքացիների 40 տարին, կամ ընտրական իրավունքները վերականգնելուց հետո:

69. Այն դեպքերում, յերբ թիկունքային աշխարհազորի հաշվառման շրջանը վերջանում է 40 տարին լրանալուց առաջ, այդպիսի քաղաքացիները հանվում են թիկունքային աշխարհազորի հաշվառումից և մտցվում

են զինապարտների ընդհանուր հաշվառման մեջ, ըստ տարիքային խմբակի և զին. հաշվառման մասնագիտության:

70. Վորպես «կրոնականներ» յենթակա յեն հաշվառման այն քաղաքացիները, վորոնք ազատված են զին. ծառայությունից զորակոչային հանձնաժողովների կողմից, դատական մարմինների համապատասխան վորոշումների հիման վրա, կրոնական համոզմունքների պատճառով:

71. «Կրոնականների» հաշվառման մեջ գտնվելու ժամկետն սկսվում է զորակոչային հասակից և տեվում է մինչև 40 տարեկան հասակը:

72. Թիկունքային աշխարհազորի մեջ մտցվածների և «կրոնականների» հաշվառումը կատարվում է զինապարտների հաշվառումից առանձին:

9. ՁԻԵՐԻ ՅԵՎ ՍԱՅԼԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

73. Ռազմական դերատեսչության գծով կատարվում է միայն զորամասերում ծառայելու համար պիտանի ձիերի հաշվառում:

74. Ռազմա-ձիական հաշվառումը կատարվում է՝

ա) ամբողջ ձիակազմը պարբերաբար ու գլխովին ընդհանուր վերահաշվառման յենթարկելու միջոցով.

բ) ամեն տարի պիտանի ձիերը զննելու և հաշվառման տվյալները ճշտելու միջոցով.

գ) հաշվառման տվյալների համապատասխան վերամշակման միջոցով:

75. Ձիակազմի գլխովին ընդհանուր վերահաշվառումը կատարվում է մի քանի տարին մի անգամ, ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում միաժամանակ, ԽՍՀ Միության կառավարության հատուկ վորոշման հիման վրա:

76. Յուրաքանչյուր տարի ձիերի զննումը և հաշվառման տվյալների ճշտումը կատարվում է շրջզորձկոմների կողմից համաձայն շրջանային Ռազմկոմատների ցուցումների, և նպատակ ունի պարզելու պիտանի

ձիակազմի վիճակը հաշվառման տվյալներում տարվա մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտահայտումը, թե քանակի և թե կազմի նկատմամբ, և պիտանի ձիերի վերաբաշխումն ըստ ժողովրդական տնտեսության սեկտորների:

77. Ձիերի և սայլերի հաշվառման ստորին ողակը գյուղխորհուրդն է, վորը պատասխանատվություն է կրում գյուղխորհրդի ամբողջ տերիտորիայում հաշվառման վիճակի և շրջզորձկոմին ժամանակին տեղեկություններ ներկայացնելու համար:

78. Ռազմա-ձիական սկզբնական հաշվառման աշխատանքներին մասնակից են արվում, կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և այլ հիմնարկներն ու ձեռնարկությունները, վորոնք զորամասերի ծառայության համար պիտանի ձիեր ունեն:

79. Ձիերի հաշվառման փաստաթղթեր են հանդիսանում՝

ա) ձիերի հաշվառման քարտերը.

բ) ձիերի հաշվառման տվյալները:

548
38

80. Ձիու հաշվառման քարտը նրա անձնական փաստաթուղթն է, վորը հաստատում է նրա պատկանելությունը և պարունակում է անհրաժեշտ տվյալներ ձիու տեսակի և վորակի մասին:

81. Անհատական սեկտորին պատկանող ձիերի հաշվառման քարտերը պահվում են գյուղխորհուրդներում, իսկ սոցիալիստական սեկտորինը—սկզբնական հաշվառման մարմիններում (կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ):

82. Ձիերի հաշվառման տվյալները, № 4 հավելվածի ձևով կազմվում են, ձիերի հաշվառման քարտերի տվյալների համաձայն, սկզբնական հաշվառման մարմինները (գյուղխորհուրդներ, խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ) և ներկայացվում են շրջզորձկոմի զին. հաշվառման մարմնին, շրջ. ռազմական կոմիսարիատի վորոշած ժամկետներին:

83. Սկզբնական հաշվառման մարմինների (գյուղ

խորհուրդներ, խորհանտեսություններ, կոլտնտեսություններ) կազմած հաշվառման քարտերից կազմվում է տվյալ հաշվառման մարմնի պիտանի ձիերի քարտատեկան:

84. Քարտատեկայում ձիերի հաշվառման քարտերը պետք է դասավորված լինեն ըստ ձիերի տեսակների: Յուրաքանչյուր տեսակի քարտերը պետք է առանձնացված լինեն միջադիրներով, վորոնց վրա նշանակվում է յուրաքանչյուր տեսակի ձիերի ընդհանուր քանակը, իսկ անհատական սեկտորները բացի դրանից, պետք է դասավորված լինեն առանձին և միջադիրներով բաժանված լինեն կուլակային, ճայնազուրկ և անհատական կարգով հարկված տնտեսությունների ձիերի քարտերը:

85. Զիուն տվյալ հաշվառման մարմինը հաշվառումից հանում է համապատասխան ձիու հաշվառման քարտը հաշվառու մարմնի քարտատեկայից հանելով:

86. Հաշվառումից հանելը կատարվում է ամեն տարի հաշվառման տվյալները ճշտելու ժամանակ:

87. Հաշվառման ընդունելը կատարվում է յուրաքանչյուր տարի, հաշվառման տվյալներն ամեն տարի ճշտելու ժամանակ, տարվա մնացած ժամանակ ձիերը հաշվառման չեն ընդունվում:

88. Բոլոր գյուղխորհուրդների վրա ընդհանուր պարտականություն է դրվում հետևելու ձիերի պահպանման և չահագործման վրա և պայքարելու նրանց ապորինաբար մորթելու դեմ: Դրա համար գյուղխորհուրդները պարտավոր են ձիակազմի վիճակի մասին ընտրովի հետազոտություններ կատարել:

89. Հաշվառման պատասխանատվությունը գյուղխորհրդի տերրիտորիայում անհատապես պետք է դրվի գյուղխորհրդի անդամներից մեկի վրա:

90. Սայլերի հաշվառումը կատարվում է.

ա) բոլոր սայլերի ընդհանուր ցուցակագրումով,

բ) յուրաքանչյուր տարի մեկ անդամ պիտանի սայլերի քանակի վերաբերյալ տեղեկությունները ճշտելու միջոցով:

91. Բոլոր սայլերի ընդհանուր ցուցակագրումը կատարվում է մի քանի տարին մեկ անգամ բոլոր ձիերի ընդհանուր վերահաշվառման հետ միաժամանակ:

92. Պիտանի սայլերի հաշվառման տվյալների ճշտումը կատարվում է յուրաքանչյուր տարի ձիերի վերազննության և հաշվառման տվյալները ճշտելու հետ միաժամանակ:

93. Պիտանի սայլերի քանակի մասին տեղեկություն չին. հաշվառման մարմինների կողմից մտցվում են ձիերի ընդհանուր հաշվառման տեղեկությունների մեջ:

94. Չին. հաշվառման մարմինները անհատական քարտեր սայլերի մասին չեն լրացնում:

95. Հաշվառման ենթակա են միաձի, յերկձի, յեռաձի և քառաձի սայլերը: Միաձի սայլերը բաժանվում են ըստ յերկաթե և փայտե առնի ունեցող սայլերի: Մնացած սայլերից ենթակա են հաշվառման միայն յերկաթե առնիներ ունեցողները:

96. Գյուղխորհուրդը կազմում է բոլոր սայլատերերի անվանական ցուցակը № 3 հավելվածի ձևով:

Կ.Կ. բանակի շտաբի 2-րդ բաժնի պետ՝

Կարտաշև

Հավելված № 1

ՑՈՒՑԱԿ

.....գյուղխորհրդում հաշվառման մեջ գտնվող .....

(գյուղխորհրդի անունը) (ցույց տալ խմբակը) համաձայն 44-րդ կետի

Զինապարտների

Տան № №	Ազգանուն, անուն յեվ հայրանուն	Տարեկան	Ընտանեկան դրությունը	Հաշվառման մեջ գտնվելու ժամանակը	Կալվածքային դիրքը	Սոցիալական դիրքը	Ցերբ և ցեղ	Ցերբ և դավանանք	Գրագիտություն	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Հավելված № 2

ՑՈՒՑԱԿ

.....Շրջանի _____ Գյուղխորհրդի տերբիտորիայում բնակվող

(Շրջանի անունը) (գ.խորհրդի անունը) պահեստի միջին, ավագ, և բարձր պետ կազ

Տան № №	Ազգանուն, անուն, հայրանուն	Տարին	Ծնունդ	Հաշվառման ընդունելու ժամանակը	Հասցեն	Ցերբ և հանված հաշվառումից	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8

Հավելված № 3

ՑՈՒՑԱԿ

.....Գյուղխորհրդի՝ սայլեր ունեցող քաղաքացիների
(գ.խ. անունը)

№№ ըստ կարգի	Ազգանուն, անուն յուր հայրանուն	սայլերի թիվը	ներքնից միաձի երկաձիկ	ներքնից միաձի փայտե	ներքնից յերկձի	ներքնից յեռաձի	ներքնից քառաձի	Մանրամասնություն
1	2	3	4	5	6	7	8	9

Հավելված № 4

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

.....Շրջանի.....գյուղխորհրդի ձիերի և սայլերի
(Շրջանի անունը) (գյուղխորհրդի անունը)

սեկտորի անունը	պլատանի ձիերը քանակը՝ ընդամենը	հրդեհատարվածներ	հրետանային դիրքերում	ծանր հրետանային	հեծելազորային	հետևակային	Լոսանոցում եղած ձիերի ընդհանուր քանակը	սայլերը՝ միաձի երկաձիկ	միաձի փայտե դակ	յերկձի	յեռաձի	քառաձի	Մանրամասնություն

ՀՀ ազգային գրադարան
NL0215618

Հավելված № 5

ՑՈՒՑԱԿ

Գյուղխորհրդում, հաշվառման մեջ գտնվող կցագրված զինապարտների կազմի

(ցույց տալ գյուղխորհրդի անունը)

Զինապարտի տարիքը	Ազգանուն, անուն և հայրանուն	Զին. հաշվառման ժամանակագիտութ.	Զինապարտի վիճակագրական	Ընտանեկան դրություն	Զինապարտի և նրա ընտանիքի անդամների	Հողի ընդհանուր տարածություն	Գյուղատնտեսական գործիքներ	Գյուղատնտեսական գործարան	

ՀՍՍՀ ՍԱՀՄ
ՀՍԽՀ—ՍՍՌ
Հ. Ա. Մասիսյանի
անվան գրադարան
355.2
Ս-21
337
41.109